



**«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ/00098348 ծրագիր**

**Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի հիմնանորոգում**

*«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ծրագիրն (2017-2023) իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի կողմից՝ Կլիմայի կանաչ հիմնադրամի (ԿԿՀ) ֆինանսավորմամբ, ՀՀ բնապահպանության նախարարության համակարգման ներքո՝ նպատակ ունենալով նպաստել շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումներին:*



«Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագրի հիմնական գործընկերը Երևանի քաղաքապետարանն է, որը 2016թ.-ին մշակելով «Երևան քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը», կարևորել է էներգաարդյունավետության խթանումն իր գործունեության տարբեր ոլորտներում: Առաջնահերթությունը տրվել է նախադպրոցական ուսումնական հաս-

տատություններին՝ երեխաների համար ավելի հարմարավետ պայմաններ ապահովելու նպատակով:

Արդյունքում՝ Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի միջև 2017թ.-ի ապրիլի 28-ին ստորագրվել է Մտադրությունների մասին հուշագիր, որով փորձարկվել է համագործակցության նոր ձևաչափ. Երևանի քաղաքապետարանը ՄԱԶԾ-ին է պատվիրակել աշխատանքների իրականացումը, իսկ Ծրագիրն իր հերթին համաֆինանսավորել է էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները:

Այս համագործակցությամբ ճանապարհ է հարթվել «Երևանի էներգաարդյունավետության ծրագրի» մեկնարկի համար՝ 2017թ.-ի դեկտեմբերի 1-ին Երևանի քաղաքապետարանի և Եվրոպական ներդրումային բանկի (ԵՆԲ) միջև ստորագրված ֆինանսական պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագրով ներգրավվել է 7 մլն եվրո վարկ ԵՆԲ-ից, 5 մլն եվրո դրամաշնորհ՝ Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամից (E5P):

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ի միջև ստորագրված հուշագրով հիմնանորոգման համար ընտրվել են Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի #160 մանկապարտեզն ու Էրեբունի վարչական շրջանի թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը: Վերջինիս ընտրությունը պայմանավորված է եղել մի շարք հանգամանքներով. նախ՝ Էրեբունի Երևան քաղաքի խոշոր վարչական շրջաններից է (126,300 բնակիչ), որտեղ գործող միակ մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը սպասարկում է սպորտի և արվեստի տարբեր խմբակներում ներգրավված մեծ թվով երեխաների: Բացի այդ, շենքը կառուցվել է 1970-ական թվականներին, որից հետո այն կապիտալ վերանորոգման չի ենթարկվել: Ի վերջո, ունենալով շահագործման մեծ ծախսեր և հարմարավետության ոչ բավարար մակարդակ՝ կենտրոնն ի վիճակի չի եղել գործել ողջ ծավալով:

**ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

Հուշագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի ներկայացրած մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների նախագիծը լրամշակվել է Ծրագրի կողմից՝ ներառելու սեյսմազինվածության մակարդակի և էներգաարդյունավետության բարձրացման միջոցառումներ, որոնց ապահովման համար Ծրագրի կողմից ներդրվել է շուրջ **47 մլն ՀՀ դրամ**: Վերանայված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա՝ ՄԱԶԾ ընթացակարգերով հայտարարվել են կապալառուների և մատակարարների մրցույթներ և ընտրվել համապատասխան որակավորում ունեցող կազմակերպություններ:

<b>Մակերես՝ 6,500 մ<sup>2</sup></b>	<b>Ներդրում՝ 388.5 մլն ՀՀ դրամ</b>
<b>Սկիզբ՝ 2017թ. օգոստոս</b>	<b>ՄԱԶԾ-ԿԿՀ Ծրագրի ֆինանսավորում՝ 12.5%</b>
<b>Ավարտ՝ 2018թ. օգոստոս</b>	<b>Երևանի քաղաքապետարանի ֆինանսավորում՝ 87.5%</b>

Ծրագիրն ու Երևանի քաղաքապետարանն ամենօրյա ռեժիմով հետևել են աշխատանքների իրականացման ողջ ընթացքին: Վերահսկողություն է իրականացվել մատակարարվող նյութերի, սարքավորումների ու ապրանքների, ինչպես նաև շինարարական աշխատանքների որակի նկատմամբ:

Իրականացվել է շենքի ուժեղացումն ու սեյսմազինվածության մակարդակի բարձրացումը՝ հիմքերի, կրող տարրերի ու վերնածածկի ամրացմամբ:






Նոր տանիքի կառուցմանը զուգահեռ իրականացվել է վերնածածկի ջերմամեկուսացումը տեղական արտադրության հանքաբամբակե ներքնակներով: Արտաքին պատերի ջերմամեկուսացման համար կիրառվել են հանքաբամբակե կոշտ սալերը:



Ամբողջովին վերափոխվել է ջեռուցման համակարգը. ավանդական կաթսաները փոխարինվել են կոնդենսացիոն տիպի էներգաարդյունավետ կաթսաներով, հին թուջե մարտկոցները՝ այլուսիճե մարտկոցներով, որոնք ունեն նաև ձեռքի կարգավորիչ փականներ: Վերջինիս շնորհիվ, հնարավոր է կարգավորել ջերմաստիճանը տարբեր սենյերում: Մարտկոցների մետաղական խողովակները փոխարինվել են պոլիպրոպիլենե խողովակներով, տեղադրվել են ֆանկոյլներ:



Փոխվել են բոլոր սենյակների, ինչպես նաև մարզասրահի ու հանդիսությունների սրահի հատակները: Ճեմասրահում կիրառվել է հատակային ջեռուցումը:

Հին պատուհաններն ու դռները փոխարինվել են մետաղապլաստե 4-խցիկանի պրոֆիլներով պատուհաններով և ալյումինե ջերմախզիչ միջուկով երկշերտ ապակեպատվածքով վիտրաժներով ու դռներով: Հիմնովին վերանորոգվել են սանհանգույցներն ու ցնցուղարանները: Ներդրվել է լուսադիոդային լուսավորման համակարգ՝ նոր շինարարական նորմերին համապատասխան: Շիկացման և լյումինեսցենտային լամպերը փոխարինվել են լուսադիոդային լուսատուներով:



Բարեկարգվել է նաև բակը, որը հնարավորություն կընձեռի բացօթյա պարապմունքներ անցկացնել:



Արդյունքում, շենքի **էներգաարդյունավետության մակարդակը բարձրացվել է ավելի քան 50%-ով**, իսկ Ծրագրի հիմնական ցուցանիշ հանդիսացող **CO<sub>2</sub> արտանետումների կրճատումը կազմել է 250 տ/տարի**:

**Ուղղակի շահառուները**

<b>Երեխաներ՝</b>	ավելի քան 700
<b>Անձնակազմ՝</b>	60

